ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

<u>ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ</u>

ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝ ԳԲՔԱ-ԼՕ-2020/66, 15.05.2020թ.

Բողոք բերող անձ՝ «Խաչպար» ՍՊԸ

Պատվիրատու՝ «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը՝ «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/52» բաց մրցույթ

Գնման առարկան՝ Բժշկական պարագաների ձեռքբերում

Բողոքի պահանջը՝ Պարտավորեցնել «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/52» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին՝ ընդունելու որոշում՝ «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/52» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգում փոփոխություն կատարելու մասին՝ համապատասխանեցնելու համար Հրավերի բողոքարկվող Հավելվածները ՀՀ ՖՆ 2019թ. Նոյեմբերի 4-ի թիվ 597-Ա հրամանով հաստատված «Օրինակելի ձև»-երին:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ Լ. ՕՀԱՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ռ. ՄԿՐՏՉՅԱՆ

Նիստերին կարելի է առցանց հետևել https://www.e-gov.am/gnumner/ **հղումով**.

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

- 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին

ներկայացնելով համանման բողոք: Նույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,

- 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

ՀՀ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին

ԲՈՂՈՔ

1) Բողոք բերող անձ՝ <<Խաչպար>> ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Ռաֆֆու 33/7
2) Պատվիրատուի անվանումը՝ <<Նորք-Մարաշ>> ԲԿ>> ՓԲԸ
Հասցե՝ ք. Երևան, Ա. Արմենակյան 108/4

3) Գնանշման հարցման ծածկագիրը՝ « *ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/52*»
և առարկան՝ << Բժշկական պարագաների ձեռք բերում>>

4) Վեճի առարկան և բողոք ներկայացնող անձի պահանջը՝

Տեղեկացնում եմ Ձեզ, որ <<Նորք-Մարաշ>> ԲԿ>> ՓԲԸ -ն << Բժշկական պարագաների >> ձեռքբերման նպատակով հայտարարություն է հրապարակել <<*ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/52*>> ծածկագրով բաց մրցույթի մասին, որը հաստատվել է գնահատող հանձնաժողովի 2020 թ. մայիսի 12-ի թիվ 1 որոշմամբ (կից փաստաթուղթ թիվ 1):

Հրավերով գնման առարկա է հանդիսանում բժշկական պարագաների ձեռքբերումը Հրավերի թվով 15 չափաբաժիններով (կից փաստաթուղթ թիվ 2):

Հրավերի <<ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ>> Հավելված թիվ 6-ը՝ այդ թվում նաև 3.3 կետը (կից փաստաթուղթ թիվ 3, արված նշումները), չեն համապատասխանում ՀՀ ՖՆ 2019թ. նոյեմբերի 4-ի թիվ 597-Ա հրամանով հաստատված <<Օրինակելի ձև>>-ով սահմանված պահանջներին (կից փաստաթուղթ թիվ 4, արված նշումները):

Հրավերի <<ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ>> Հավելված թիվ 6-ի <<ԿՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ >> Հավելված թիվ 2-ը (կից փաստաթուղթ թիվ 5, արված նշումները) չի համապատասխանում <<Օրինակելի ձև>>-ով հաստատված Հավելված թիվ 2-ին (կից փաստաթուղթ թիվ 6), բացի այդ՝ Հավելված 2-ում նշված <<....90 օրվա ընթացքում....>> սահմանումը (կից փաստաթուղթ թիվ 5, արված նշումները) չի համապատասխանում <<Օրինակելի ձև>>-ի Հրավերի պայմանագրի 3.3. կետով ամրագրված <<....30 աշխատանքային օրվա ընթացքում....>> սահմանումներին (կից փաստաթուղթ թիվ 4, արված նշումները):

<<Խաչպար>> ՍՊԸ-ն՝ ղեկավարվելով ՀՀ <<Գնումների մասին>> Օրենքի թիվ 46 հոդվածի 1-ին մասով և 3-րդ մասի 1-ին կետով, բողոքարկում է Պատվիրատուի՝ <<Նորք-Մարաշ>> ԲԿ>> ՓԲԸ –ի <<*ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/52*>> ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի 2020թ. մայիսի 4-ի թիվ 1 որոշմամբ հաստատված՝ <<Բժշկական պարագաների>> ձեռքբերման նպատակով հայտարարված <<*ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/52*>> ծածկագրով բաց մրցույթի Հրավերի ընթացակարգը և դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին, խնդրում է Ձեզ՝ ղեկավարվելով <<Գնումների մասին>> ՀՀ Օրենքի թիվ 50 հոդվածի 7-րդ մասով՝

Ընդունելու որոշում, որը կպարտավորեցնի <<Նորք-Մարաշ>> ԲԿ>> ՓԲԸ – ի <<*ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/52*>> ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին՝ ընդունելու որոշում՝ <<*ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/52*>> ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգում փոփոխություն կատարելու

մասին՝ համապատասխանեցնելու համար Հրավերի բողոքարկվող Հավելվածները ՀՀ ՖՆ 2019թ. նոյեմբերի 4-ի թիվ 597-Ա հրամանով հաստատված <<Օրինակելի ձև>>-երին:

5) բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները՝

Ներկայացված փաստաթղթերը փաստում և ապացուցում են, որ <<Նորք-Մարաշ>> ԲԿ>> ՓԲԸ –ի <<*ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/52*>> ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի կողմից 2020թ. մայիսի 12-ի 1 որոշմամբ հաստատված Հրավերի <<ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ>> Հավելված թիվ 6-ի 3.3 կետը, այդ պայմանագրի անբաժանելի մաս համարվող <<-ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ >> Հավելված թիվ 2-ը չեն համապատասխանում ՀՀ ՖՆ 2019թ. նոյեմբերի 4-ի թիվ 597-Ա հրամանով հաստատված համապատասխան <<Օրինակելի ձև>>-երին:

6) Կից ներկայացնում եմ բողոքարկման վճարի անդորրագիրը:

Առդիր՝ 6 թերթ:

<<Խաչպար>> ՍՊԸ տնօրեն՝ Սմբատ Բալասանյան

15 մայիսի 2020թ.

E-mail: khachpar.llc@gmail.com

Հեռախոս՝ 091-45-90-45

<<Ինեկոբանկ>> ՓԲԸ, h/h 2050922055871001